

«ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐՈՎ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ ԵՆ ՀԱՆՁՆՎԵԼ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ

12.04.2018 17:16



2018 թվականի ապրիլի 12-ին «Փաստաբան եզեգելյան օժանդակություն» ծրագրի շրջանակներում 51 փաստաբանի հանձնվել են մեկ տարվա անդամավճարի վճարման վերաբերյալ հավաստագրեր: Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը ներկա փաստաբաններին ներկայացրել է 22 փաստաբանների պալատի պատվավոր անդամ, Ֆրանսիահայ փաստաբան բարերար Ռայմոն Եզեգելյանի հետ համագործակցության անցած ուղին և տեղեկացրել նոր ծրագրերի նախագծման մասին: Նա շնորհակալություն է հայտնել Ռայմոն Եզեգելյանին փաստաբանների կողքին լինելու, նրանց խնդիրների հանդեպ անտարբեր ջնալու համար:

«Փաստաբան եզեգելյան օժանդակություն» ծրագրի շահառուների թիվն այս տարիների ընթացքում հասել է 260-ի: Շահառուներին որոշելու նպատակով ձևավորված հանձնաժողովը՝ ըստ համապատասխան կարգով նշված առաջնահերթության, նախապատվություն է տվել հետևյալ փաստաբաններին՝

- 1) 60-69 տարեկան փաստաբաններին՝ ովքեր չունեն մշտական աշխատանք, ոչ ավել, քան 10 (տաս) փաստաբան.
- 2) 2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամ փաստաբաններին՝ ոչ ավել, քան 5 (հինգ) փաստաբան.
- 3) միայնակ մայր հանդիսացող փաստաբաններին՝ ոչ ավել, քան 7 (յոթ) փաստաբան:
- 4) ընտանիքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչված (զինվորական ծառայության մեջ գտնվող) զավակ ունեցող փաստաբաններին՝ ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան:
- 5) նյութական դժվարություններ ունեցող մարզի փաստաբաններին՝ ոչ ավել, քան 10 (տաս) փաստաբան, յուրաքանչյուր մարզից մեկ փաստաբան՝ մարզային համակարգողի գրավոր առաջարկով.
- 6) երկու կամ ավելի անչափահաս երեխաներ ունեցող փաստաբաններին՝ ոչ ավել, քան 8 (ութ) փաստաբան:







Վերադառնալ `$(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } }`